

ԳԼՈՒԽ Դ ԱՐԾՐՈՒՆԻ ԻՇԽԱՆ ՄԸ

Թողունք Յովնան իւր խոր մտածութեանց մէջ, Աշտիշատայ աւերակաց վրայ, Մեծին Սահակայ գերեզմանին մօտ, որ խորհրդած է իւր բախտին եւ իւր հայրենեաց վրայ եւ ջանայ ուղղութիւն մը տալու իր բռնելու ընթացքին, դառնանք այդ Գուրգէն իշխանին, որ տեսանք եւ որ երեւելի դիւցազն մ'է այդ ժամանակի պատմութեան մէջ եւ որ զարմանալի է՝ գրեթէ անծանօթ մնացած:

Գուրգէն՝ Արծրունի էր հօր կողմանէ, Մամիկոնեան մօր կողմանէ. բախտը զինքն այդ երկու ազնուատոհմ ընտանեաց զաւակ ընելովք եւ ամէն անձնական բարեմասնութեամբ զարդարելով՝ այնպիսի վիճակի մը մէջ դրած էր, որ չուզեց, մանաւանդ թէ չի կրցաւ պատասխանել Յովնանու ծանր ամբաստանութեանց ընդդէմ նախարարական սերնդին: Եւ բաւական հեռանալէն վերջ նաեւ Մշոյ քաղաքէն, միտքը միշտ ժողովրդական մարդուն ըսածներուն վրայ կը շրշեր եւ իբրեւ թէ նորա վերջին խօսքերուն արձագանքը դեռ իւր ականջին կը հնչէր:

«Այդ մարդը հասարակ մարդ մը չէ, եւ ինք իրաւունք ունի գանգտելու մեզմե... բայց միթէ՛ մենք չունինք իրաւունք գանգտելու, ո՛վ է իշխանական ցեղի մարդ, որ սրոյ հարուածի մը, դաւաճանութեան մը, որոգայթի մը, յափշտակութեան մը ենթակայ եղած լուինի իւր համանման սերնդակից ազատեն: Միթէ իմ հայրս բռնի մահուամբ չի գրաւեցաւ՞ իւր տոհմակից Արծրունիներէն, եւ իմ ժառանգութիւնս ամբողջ նոցայ ձեռքը չանցաւ՞: Ո՞ւմ ուստի գանգտիմ: Ահս ութը տարի է, որ կը թափառիմ թողած իմ հայրենի Վասպուրական երկիր. եւ ի՞նչ տեսայ, ամէն տեղ մարդ նոյն գազանը տեսայ՝ վատ, հաչաղկոտ, շողոքորթ, անգութ, գոռոզ յաջողութեանց մէջ, անարգ ձախորդութեան մէջ, վերջապէս մարդ՝ ողորմելի կենդանի: Այն օրը, որ դիւցազն մը տեսայ՝ Մանուէլ Մամիկոնեան, որ փախստական կ'երթար Յունաց կայսեր ձեռքէն, որու կեանքն ազատեր էր, եւ նորա թշնամեաց գիրկը կ'իյնար, որպէսզի իւր կեանքն էլ ազատեր,